Գր-1 01.02.2017թ
Գրանցման N 11717050

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«20» դեկտեմբերի 2017թ. N 05-Ա

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԴՈՆՑ ՓՈՂՈՑԻ N 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆ ԳՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ ԵՎ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի N 1209-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ ու 12-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1111-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի N 6 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան գնելու ցանկություն ունեցող պետական ծառայողների կողմից ներկայացվող դիմում-հայտի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել գերատեսչությունների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե ներկայացվող գերատեսչական տեղեկանքի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն հրամանի 1-ին կետում նշված դիմում-հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2017 թվականի մարտի 17-ը, ժամը 18:00:

4. Սույն հրամանի 2-րդ կետում նշված գերատեսչական տեղեկանքների ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2017 թվականի մարտի 24-ը, ժամը 18:00:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

«20» մարտ 2017թ.

ք. Երևան

Հավելված N 1
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի
201 7 թվականի հունվարի 20 N 05-Ա հրամանի

N _____

_____ աշխատակազմի ղեկավար
(գերատեսչության անվանումը)

պարոն/տիկին _____ - ին
(աշխատակազմի ղեկավարի անուն, ազգանուն)

_____ - ից
(դիմում-հայտ ներկայացնողի անուն, ազգանուն)

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ

Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի N 6 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան գնելու

Ծառայողի անունը, ազգանունը և հայրանունը	Ծառայողի ընտանիքի կազմը	Ծառայողի պաշտոնը, աշխատանքային ստաժը	Ծառայողի անձնագրային տվյալները	Ծառայողի էլեկտրոնային հասցեն	Ծառայողի հեռախոսա-համարը	Ծառայողի կողմից ակնկալվող բնակարանների սենյակների թիվը

Սույն դիմում-հայտին կից ներկայացնում եմ՝

1. աշխատանքային գրքույկի պատճենը՝ կազմված _____ էջից.
2. ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ կազմված ____ էջից.
3. Ամուսնության, ամուսնալուծության, հայրության ճանաչման վկայականների պատճենները՝ կամված ____ էջից.
4. Ծրագրի վարկատու կազմակերպության գրավոր համաձայնությունը՝ Ծառայողի և (կամ) Ծառայողի ընտանիքի անդամին կոնկրետ սահմանաչափով վարկի տրամադրման պատրաստակամության մասին՝ կազմված _____ էջից:

Սույն դիմում-հայտով հայտնում եմ, որ ցանկություն ունեմ մասնակցելու Ծրագրի շրջանակներում բնակարանների ձեռքբերման գործընթացին, ծանոթացել եմ ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի N 1209-Ն որոշմամբ սահմանված պայմաններին և սույն դիմում-հայտը ներկայացնելով՝ ընդունում եմ ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի N 1209-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգով նախատեսված պետության առաջարկած պայմանները՝ ներառյալ պատասխանատվության պայմանները:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստում ենք, որ սույն դիմում-հայտով և դիմում-հայտին կից ներկայացվող բոլոր տվյալները համապատասխանում են իրականությանը:

_____
(դիմում-հայտը ներկայացնելու ամսաթիվը)

_____
(դիմում-հայտը ներկայացնողի անուն, ազգանուն, ստորագրություն)

_____
(ծառայողի ընտանիքի անդամի անուն, ազգանուն, ստորագրություն)

Դիմումն ընդունեց՝ _____
(դիմումն ընդունողի անուն, ազգանուն, ստորագրություն)

Ներկայացվել է դիմում _____ - ի կողմից
(դիմում-հայտը ներկայացնողի անուն, ազգանուն, ստորագրություն)

Ստացվել է _____ - ի կողմից «___» _____ 201 թ.
(դիմումն ընդունողի անուն, ազգանուն, ստորագրություն)

N _____

1. «Ծառայողի անունը, ազգանունը և հայրանունը» սյունակում լրացվում է Ծրագրի շրջանակներում բնակարան գնելու ցանկություն ունեցող անձի անունը, ազգանունը և հայրանունը:

2. «Ծառայողի ընտանիքի կազմը» սյունակում լրացվում է ծառայողի հետ ազգակցական կապ ունեցող անձի անունը, ազգանունը և ազգակցական կապը: Ծրագրի շրջանակներում ծառայողի ընտանիքի անդամ են համարվում ծառայողի ամուսինը, երեխաները և ծնողները: Ծառայողի համաձայնության դեպքում նրա ընտանիքի կազմում կարող են ներառվել նաև այլ ազգականներ, ովքեր պատրաստ են ծառայողի բնակարանի ձեռքբերման համար մասնակցել գնման ֆինանսավորմանը՝ ներառյալ հիպոթեքային վարկի միջոցով:

3. «Ծառայողի պաշտոնը, աշխատանքային ստաժը» սյունակում լրացվում է դիմում-հայտ ներկայացնելու պահին Ծառայողի այն պաշտոնը և աշխատանքային ստաժը, որը բավարարում է ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 18-ի N 1209-Ն որոշման հավելվածի 2-րդ կետով պահանջվող՝ Ծրագրի շահառու դառնալու հավակնելու պայմաններին:

4. «Ծառայողի անձնագրային տվյալներ» սյունակում լրացվում է Ծառայողի անձնագրի սերիան, ում կողմից և երբ է տրվել, հաշվառման հասցեն, փաստացի բնակության վայրի հասցեն:

5. «Էլեկտրանային հասցե» սյունակում լրացվում է Ծառայողի էլեկտրոնային հասցեն: Ծրագրի շրջանակներում ծանուցումներն իրականացվելու են ծառայողի կողմից նշվող էլեկտրոնային հասցեի միջոցով, որի դեպքում համարվելու են պատշաճ կատարված:

6. «Հեռախոսահամար» սյունակում լրացվում են Ծառայողի աշխատանքային և անձնական հեռախոսահամարները (բջջային և քաղաքային):

7. «Ծառայողի կողմից ակնկալվող բնակարանների սենյակների թիվը» սյունակում լրացվում է բնակարանի այն սենյակների թիվը, որը ցանկանում է ձեռքբերել Ծառայողը: Բնակարանի սենյակների թվի ընտրությունը կարող է կատարվել մեկից մինչև չորս սենյակների միջև:

8. Ծառայողի և (կամ) Ծառայողի ընտանիքի անդամին կոնկրետ սահմանաչափով վարկի տրամադրման պատրաստակամության դեպքում՝ Ծրագրի վարկատու կազմակերպության գրավոր համաձայնությունը կցվում է դիմում-հայտին:

9. Ծառայողի ընտանիքի կազմում գտնվող ազգականը դիմում-հայտը ստորագրում է այն դեպքում, երբ նա պատրաստ է Ծառայողի բնակարանի ձեռքբերման համար մասնակցել գնման ֆինանսավորմանը՝ ներառյալ հիպոթեքային վարկի միջոցով:

Հավելված N 2
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի
201 7 թվականի մարտի 20 N 05-Ա հրամանի

ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում բնակարան գնելու պայմաններին բավարարող հավակնորդների վերաբերյալ

_____
(Գերատեսչության անվանումը)

Աղյուսակ 1:

Բնակարան գնելու հավակնորդների ընդհանուր թիվը՝ ըստ անձի	Հավակնորդների ընդհանուր թիվը՝ ըստ սենյակների			
	Մեկ	Երկու	Երեք	Չորս

Աղյուսակ 2:

Հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը	Հավակնորդի ընտանիքի կազմը	Հավակնորդի պաշտոնը, աշխատանքային ստաժը	Հավակնորդի անձնագրային տվյալներ	Հավակնորդի էլեկտրոնային հասցեն	Հավակնորդի հեռախոսահամարը	Հավակնորդի կողմից ակնկալվող բնակարանների սենյակների թիվը

Սույն տեղեկանքին կից ներկայացվում են հավակնորդների կողմից ներկայացված դիմում-հայտերը և դրանց կից փաստաթղթերը:

_____
(տեղեկանքը կազմելու ամսաթիվը)

_____
(Գերատեսչության աշխատակազմի ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.